Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոց

ԱՎԱՐՏԱԿՆ ՀԵՏԱԶՈՏԱԿՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ

1921թ Մոսկվայի մարտի 16-ի և

Կարսի հոկտեմբերի 13-ի

պայմանագրերը:

ՈՒՍՈՒՑԻՉ

Երազիկ Կառլենի Դովլաթյան

ՂԵԿԱՎԱՐ

Ռուզաննա Բարսեղյան

ԵՂԵԳՆԱԶՈՐ 2022

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ---------- 3

ԳԼՈՒԽ 1

Պայմանագրի կնքման նախորեին տիրող

իրավիճակը ---------- 5

ԳԼՈՒԽ 2

Մաս առաջին. Մոսկվայի

պայմանագիրը ---------- 10

Մաս երկրորդ. Կարսի պայմանագիրը ---------- 12

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ---------- 16

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ---------- 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի ընտրությունը պատահական չէ, քանի որ ինչպես 20-րդ դարի սկզբին, այնպես էլ մեր ժամանակներում չի կորցրել իր արդականությունը: Ավելին, ներկայումս այն սերտորեն կապված է տեղի ունեցող մի շարք իրադարձությունների հետ: Հիմա էլ հայ Этотժողովուրդն ապրում է մի ժամանակաշրջանում երբ ամեն ժամ, ամեն րոպե վճռվում է Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության, պետականության լինել չլինելու հարցը:

Ուղիղ 101 տարի առաջ հայ ժողովուրդը ևս կանգնել էր իր պետականությունը, տարածքային ամբողջականությունը կորցնելու փաստի առաջ: Եվ ինչպես այդ ժամանակ ցույց տվեց իրադարձությունների ընթացքը, օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով պայմանավորված, հայ ժողովուրդը կորցրեց իր հայրենիքի մի զգալի մասը: Կնքվեց պայմանագիր[1], որի կնքմանը հայկական պատվիրակությանը թույլ չտվեցին մասնակցել: Այսինքն, առանց հայկական կողմի մասնակցության և համաձայնության, ռուսների և թուրքերի միջև կնքված պայմանագրով Հայաստանի տարածքի մի զգալի մասը տրվեց թուրքերին: 1921թ Ռուսաստանը, մինչև կոնֆերանսի սկսվելը, շատ լավ գիտեր քեմանկական Թուրքիայի հակառուսական, հակախորհրդային դիրքորոշման մասին: Ռուսաստանին անհանգստացնում էր այն, որ Թուրքիան

[1] -1921 թ Մոսկվայի մարտի 16-ի պայմանագիրը:

կարող է անցնել Անտանտի կողմը: Վտանգից խուսափելու համար ռուսական կողմը գնում էր զիջումների հօգուտ Թուրքիայի, որնէլ շտապեց օգտվել առիթից: Թուրքական կողմի բարձրացրած ցանկացած պահանջ ռուսները ձգտում էին բավարարել, ինչի արդյունքում, ոտնատակ էին արվում Հայաստանի շահերը: Թուրքիան նույնիսկ հասավ դրան, որ ստիպեց Ռուսաստանին մեծացնել իրեն տրվող օգնության չափը, ինչին ռուսական կողմը, առանց երկար մտածելու տվեց իր համաձայնությունը:

Կնքված պայմանագիրը և՛ս Թուրքիայի խոշոր հաղթանակն էր, քանի որ նա կարողացավ ոչ միայն չեղյալ հայտարարել Սևրի պայմանագիրը, որի կյանքի կոչվելը Թուրքիային կդարձներ մի թույլ պետություն այլև թույլ տվեց տեր դառնալ Հայաստանից զավթած մի բավական մեծ տարածքի:

ԳԼՈՒԽ ԱՌՋԻՆ

ՊԱՅՄԱՆԳՐԻ ԿՆՔՄԱՆ ՆԱԽՕՐԵԻՆ ՏԻՐՈՂ ՎԻՃԱԿԸ

1921թ փետրվարի 26-ին սկսվեց ռուս-թուրքական կոնֆերանսը, որը որոշ ընդհատումներով շարունակվեց մինչև մարտի 16-ը: ՌՍԴԽՀ պատվիրակության կազմում էին արտգործժողկոմ Գ. Չիչերինը և նրա տեղակալ, հայազգի Լևոն Կարախանը: Թուրքական կողմը հայտարարեց, որ Խորհրդային Հայաստանի պատվիրակության հետ բանակցություններ չի վարի: Ավելին, պահանջեց, որ խորհրդային պատվիրակության կազմից հանեն Լևոն Կարախանյանի: Նրա փոխարեն պատվիրակության կազմից մեջ մտավ դաղստանցի ե Ջելալեդին Կորկմասովը: Թուրքական կողմի այդ քայլին ի պատասխան ռուսական կողմը առաջարկեց, որ Ադրբեջանը ևս չմասնակցի կոնֆերանսին:

Այսպիսով կոնֆերանսը դարձավ երկկողմ. ռուս-թուրքական: Կոնֆերանսի առաջին նիստը ցույց տվեց, որ դրա նախապատրաստական աշխատանքները դեռ չեն ավարտվել և դրանք պետք է շարունակել հին, մի շարք լուծում չստացած խնդիրներ, մասնավորապես, սահմանային Գծի պաշտպանական գոտու հարցում:

1921թ մարտի 6-ին Գ. Չիչերինը ուղղված նամակում Ստալինը հայտնում է որ թուրքերի հետ հանդիպման ժամանակ հնարավոր տարածքային զիջումների մասին ինքն արել է հայտարարություններ:[2]

[2] -ՀՅՊ, 4-րդ հ., էջ 329

Ստալինը հանդիպում է նաև թուրքական պատվիրակության հետ և հասկացնել տալիս, որ գործուն մասնակցություն կունենա որպեսզի վերացնի Չիչերինի անտեղի հակաթուրքական դիրքորոշումը:[3] Թուրքական պատվիրակության անդամ Ալի Ֆուադը վերհիշում է Ստալինի խոսքերը Հայաստանի չլուծված խնդիրների իրականացնելու և թուրքերին խրախուսելու մասին:

Մարտի 10-ին կոնֆերանսը վերսկսվեց: Քաղաքակա հանձաժողովի առաջին նիստը կայացավ հենց նույն օրը: սահմանների մասին հարցով: Ռուսական պատվիրակությունը հայտարարեց, որ ճանաչում է Թուրքական ազգային ժողովի ընդունած Ազգային ուխտն, ըստ որի Թուրքիա էր հռչակվելու թուրքերով բնակեցված երկիրը: Դա նշանակում էր, որ Թուրքիա էր համարվում նաև Արևմտյան Հայաստանը, որը ցեղասպանությունից հետո հայաթափվել էր ու բնակեցվել թուրքերով և քրդերով:

Այսպիսով Խորհրդային Ռուսաստանը փոխում էր իր վերաբերմունքը Հայկական Հարցի նկատմամբ և, փաստացի, հրաժարվում էր Թուրքահայաստանի մասին դեկրետից: Միակ տարածքային պահանջը, որը Գեորգի Չիչերինը ներկայացրեց, վերաբերվում էր Բաթումին, հիմնավորելով, որ այն Կովկասի համար մեծ նշանակություն ունեցող նավահանգիստ է, որը հատկացվելու է Վրաստանին: Թուրքական պատվիրակությունը դրան չի առարկում, ինչից ենթադրվում է, որ Բաթումի պատկանելիության հարցն արդեն համաձայնեցվել էր կոնֆերանսից դուրս, Կարսից հրաժարվելու դիմաց:

[3] -ՀՅՊ, 4-րդ հ., էջ 329

Հայաստանի սահմանների հարցը ռուսական կողմը թողնում էր այն-պես, ինչպես նշված էր Ալեքսանդրապոլի պայմանագրով:

Ըստ Չիչերինը, սրանք էին այն ընդհանուր պայմանները, որոնք հիմք

են դարձել, որ ռուսական կողմը, երկար մտածելով կնքել է պայմանա-գիր Թուրքիայի հետ նրա հյուսիս-արևելյան սահմանների մասին: Այսպիսով Թուրքիայի կազմում էին մնում Կարսի մարզը և Սուրմալուն որոնց վերաբերյալ բանավեճ ու քննարկում տեղի չէր ունենում: Այն տպավորությունն էր, որ այս հարցերը քննարկվել և լուծվել են մինչև բանակցությունների սկսվելը: Տեղի են ունեցել երկկողմհանդիպումներ

և նախօրոք ձեռք են բերվել համաձայնություններ:

Այդ պատճառով թուրքական պատվիրակությունը անմիջապես հայ տարարեց ,որ ընդունում է այդ սահմանն, ինչպես նաԱլեքսանդրապոլ-

Երևան երկաթուղու երկարությամբ, Արփաչայ գետի շրջանում 8 կմ.

հատվածը զորքից և ամրություններից ազատելոպարտավորությունը:[4]

Բաթումի հետ կապված թուրքերը համաձայնում են, որ քաղաքը և նավահանգիստը դրվեն Վրաստանի հովանավորության տակ, պայմա նով, որ բնակչության համար ապահովվի լայն ինքնավարություն, ճա-նաչվի մուսուլմանների իրավունքները մշակույթի, կրոնի, հողի ազատ օգտագործման ոլորտներում:

Նախիջևանի հարցում թուրքական պատվիրակությունը կարծիք է հայտնում, քանի որ Նախիջևանի բնակչությունն է կանչել թուրքական զորքին, այդ պատճառով Նախիջևանը գտնվում է թուրքական հովանա վորության ներքո:[5] Չնայած դրան, ինքը համաձայն է, որ այդ հովա-

[4] --ՀՅՊ, 4-րդ հ., էջ 330

[5] -Նույն տեղում:

նավորությունը զիջվի Ադրբեջանին, բայց պայմանով, որ այն չի վերա-զիջվի երրորդ պետության, նկատի ունենալով Հայաստանին:[6] Այսպիսով, Նախիջևանը Հայաստանին միացնելու մասին ակնարկ անգամ չեղավ կոնֆերանսում:

Չնդունելով Ալեքսանդրապոլի պայմանագրի[7] օրինականությունը, ռուսական կողմն անգամ չփորձեց առաջ քաշել դրա վերացման հարցը: Ինչպես քննարկվող մյուս հարցերում, այս հարցում ևս այն տպավորությունն էր, որ կողմերի միջև համաձայնություն էր կայացել մինչև կոնֆերանսի սկսվելը: Դա պարզ երևում էր մարտի 10-ին տեղի ունեցած նիստից, ինչը հստակ ցույց էր տալիս, որ բանակցող կողմերի միջև սկզբունքային հարցերի շուրջ հիմնական համաձայնությունները ձեռք են բերվել մինչև բանակցությունների սկսվելը: Կոնֆերանսի ընթացքի մասին Գ.Չիչերինը նամակ է ուղարկում Ստալինին և նշում որ անհրաժեշտ է ձեռք բերված արդյունքները ամրապնդել Թուրքիային տրվող օգնությամբ, հատկապես որ թուրքական պատվիրակությունը պնդում էր որ այդ օգնությունը մեծացվի:Չիչերինը դա բացատրում էր դրանով, որ եթե իրենք չօգնեն,ապա թուրքերը ստիպված կլինեն փոխել իրենց քաղաքականությունը:

Չիչերինի նամակից պարզ էր դառնում, որ ռուսները պարզապես թուրքերի հետ առևտուր են արել: Նա նշում էր, որ յուրաքանչյուր բառի ստորակետի համար մղվել է երկար պայքար և շտապեցնում է անմի-ջապես ստորագրել: պայմանագիրը:

[6] -Նույն տեղում, էջ 331

[7] -ՀՅՊ, 7-րդ հատոր

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Առաջին մաս

Մոսկվայի հաշտության պայմանագիրը

1921թ մարտի 16-ին Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության կառավարությունը և Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունը ստորագրեցին (բարեկամության և եղբայրության) պայմանագիրը:[8] Ռուսական պատվիրակության անդամներն էին Արտգործժողկոմիսար և համառուսաստանյան կենտրոնական գործադիր կոմիտեի անդամ, պատվիրակության ղեկավար Գեորգի Չիչերինը և համառուսաստանյան կենտրոնական գործադիր կոմիտեի անդամ Զելալեդին Կորկմասովը:

Թուրքական պատվիրակության անդամներն էին Թուրքիայի Ազգային մեծ ժողովի ժողովրդական տնտեսության ժողովրդական կոմիսար պատվիրակության ղեկավար Յուսուֆ Քեմալ բեյը, Թուրքիայի Ազգային մեծ ժողովի անդամ Ալի Ֆուադ փաշան: Պայմանագիրն ուներ 16 հոդված. Առաջին հոդվածի համաձայն կողմերից յուրաքանչյուրը սկզբունքորեն չէր ճանաչի ոչ մի հաշտության պայմանագիր կամ միջազգային միջազ-Ազգային որևէ այլ ակտ, որը կողմերից մեկին կարտադրեն ուժով ըն-

ընդունել: Ռուսաստանը չէր ճանաչում միջազգ[9]ային ոչ մի ակտ, որը չէր

[8] -Հայոց պատմություն, Երևան 2010:

ճանաչի Թուրքական ազգային մեծ ժողովը: Երկրորդ հոդվածով Թուրքիան համաձայն էր Բաթում նավահանգիստն ու քաղաքը զիջել Վրաստանին, պայմանով որ տեղի մուսուլման բնակչությունը կունենա լայն ինքնավարություն[i]:[10] Հայերի համար շատ կարևոր էր երրորդ հոդվածը, որը վերաբերվում էր Նախիջևանի պատկանելիության հարցը: Երկու կողմերն էլ համաձայն էին Նախիջևանի մարզը դառնա ինքնավար տարածք, Ադրբեջանի խնամակալության ներքո, պայմանով, որ Ադրբեջանն այն չի զիջի երրորդ պետության : Ուշադրության արժանի էր ութերորդ հոդվածը. Կողմերը պարտավոր էին արգելել իրենց տարածքներում այնպիսի կազմակերպությունների և խմբերի առաջացումն ու գոյությունը, որոնք ունեն մյուս երկրի կառավարության դերը ստանձնելու հավակնություն կամ կցուցաբե-զորեին պայքարը երրորդ երկրի դեմ: Նույն երրորդ հոդվածով որոշվում էր, որ Թուրքիայի հյուսիս արևելյան սահմանը, որն անցնում էր Արդահանի և Կարսի Սանջանի հյուսիսային վարչական սահմանագծի երմարության, Արփաչայ և Արաքս գետերի հունով, մինչև Ստորին Կարա Սուի գետաբերանը: Դա նշանակում էր, որ առանց հայ ժողովրդի կամք հարցնելու Թուրքիային էին զիջվում նաև 1920թ հայ-թուրքական պատերազմի ժամանակ զավթած տարածքների մեծ մասը: Վեցերորդ հոդվածով կողմերն ընդունում էին, որ մինչև հիմա երկու երկրների միջև կնքված բոլոր պայմանագրերը չեն համապատասխանում փոխադարձ շահերին: Այդ պատճառով կողմերը համաձայն են

այդ պայմանագրերը համարել ուժը կորցրած : Ռուսական կողմը հայ-

[9]- ՀՅՊ, 4-րդ հ., էջ 330

[10] -ՀՅՊ, 7-րդ հ: ՊՊԵ

տարարեց, որ Թուրքիային ազատում է մինչև այդ ցարական կառավարության հետ կնքած միջազգային ակտերից բխող դրամական և այլ պարտավորություններից: 13-րդ հոդվածի համաձայն ռուսական կողմն իր հաշվին, եռամսյա և վեցամսյա ժամկետում, պարտավորվում էր թուրքերին վերադարձնել Ռուսաստանում գտնվող բոլոր թուրք զինվորական և քաղաքացիական գերիներին: Նույն պարտավորվածությունը ստանձնում էր նաև Թուրքիան:[11]

Մնացած հոդվածները վերաբերվում էին սևծովյան նեղուցների շահագործմանը, իրենց երկրներում մեկը մյուսի դեմ թշնամական կազմակերպությունների գործունեության արգելմանը:[12]

Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը պայմանագիրը վավերացրեց մարտի 20-ին, իսկ Թուրքիայի Ազգային մեծ ժողովը հուլիսի 22-ին:[13]

[11] -Հայոց պատմություն, Երևան 2012:

[12] -Խորհրդային Հայաստանը 1920-1921թթ, Երևան 2007:

[13] -Խորհրդային Հայաստանը 1920-1921թթ, Երևան 2007:

Երկրորդ մաս

Կարսի 1921թ. հոկտեմբերի 13-ի պայմանագիրը

1921թ. մարտի 16-ին Մոսկվայում Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքվեց համագործակցության և փոխօգնության պայմանագիր, որը կարգավորում էր այդ երկու երկրների միջև եղած հարաբերությունները: Քանի որ Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը չէին մասնակցում պայմանագրի կնքմանը, որոշվեց, որ նրանց հետ ևս պետք է Թուրքիան պետք է կնքի առանձին պայմանագրեր: Այդ նպատակով, Թուրական կողմի պնդմամբ մտցվեց 15-րդ հոդվածն, ըստ որի Ռուսաստանը պարտավորվում էր դիմել քայլերի, որպեսզի Անդրկովկասի հանրապետությունները կնքվելիք պայմանագրերով ճանաչեն ռուս-թուրքական պայմանագրի այն հոդվածները, որոնք վերաբերվում են իրենց:[14] Թուրք-անդրկովկասյան կոնֆերանսին նախապատրաստվելու նպատակով 1921թ մայիսի 7-ին Բաքվում հրավիրվեց անդրկովկասյան 3 հանրապետությունների ներկայացուցիչների խորհրդակցություն, որին Հայաստանից մասնակցում էր Ալեքսանդր Բեկզադյանը, Վրաստանից Մ. Օրախելաշվիլին, Ադրբեջանից Մ. Հուսեյնովը, ինչպես նաև ՌԿ(բ)Կ ԿԿ անդամ Գ. Օրջոնիկիձեն և Անդրկովկասում ՌԽՖՍՀ ներկայացուցիչ Բ. Լեգրանը:

Խորհրդակցությունը որոշեց, որ բանակցությունների հիմքում պետք է

դրվի Մոսկվայի պայմանագիրը: Որոշվեց, որ կոնֆերանսը կարող է

[14] -Հայոց պատմություն, Երևան 2010, հ. 4-րդ

կայանալ Բաքվում, Թիֆլիսում կամ Կարսում: Առաջին հերթին պետք է քննարկվեցին Հայաստանի, ապա Վրաստանի և հետո Ադրբեջանի հետ կապված հարցերը:

1921թ օգոստոսի 26-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմը կազմեց հուշագիր, որտեղ առաջարկում էր Սուրմալուի գավառի Կողբի շրջանը թողնել Հայաստանի կազմում: Հուշագրում առաջարկվում էր նաև Հայաստանին հանձնել Նախիջևանի նկատմամբ հովանավորության իրավունքը: Առաջարկվում էր Թուրքիային որոշակի տոկոս տալու պայմանով Հայաստանին իրավունք վերապահել տնտեսական շահագործման ենթվարկել Օլթիի քարածխի, Կողբի աղի հանքերը և Սարիղամիշի անգառները:[15]

Կոնֆերանսը սկսվեց 1921 թ. սեպտեմբերի 26-ին: Խորհրդային Հայաստանին պատվիրակության նախագահն էր արտգործժողկոմ Ասքանզ Մռավյանը: Թուրքական պատվիրակության ղեկավար Քյազիմ Կարաբեքիրը առաջարկեց երեք հանրապետությունների հետ պայմանագրերը կնքել առանձին-առանձին, որը մերժվեց: Պայմանագիրը ստորագրվեց 1921թ հոկտեմբերի 13-ին: Այն բաղկացած էր 20 հոդվածից և երկու հավելվածից: Հայկական կողմից պայմանագիրը ստորագրեցին Ա.Մռավյանը, Պ. Մակինցյանը, Թուրքիայի կողմից Քյազիմ Կարաբեքիրը, Ադրբեջանի կողմից Բ. Շահթախթինսկին, ռուսական կողմից Լատվիայում լիազոր ներկայացուցիչ Յակով Գանեցկին, վրացական կողմից Շ. Էլիավան և Ա. Սվանիձեն:

Կարսի բանակցություններին պետք է մասնակցեր նաև Անդրկովկասում Ռուսաստանի ներկայացուցիչ Բորիս Լեգրանը: Բայց Մուստա-

[15] -Խորհրդային Հայաստանը 1920-1921թթ, Երևան 2007:,

ֆա Քեմալի պահանջով և Մոսկվայի կոնֆերանսին և Կարսի կոնֆե-
ռանսի նրան թույլ չտվեցին մասնակցել: Թուրքական կողմը Լեգրանին համարում էր հայամետ գործիչ:[16] Իմանալով այդ մասին Լեգրանը դիմում է ՌԿԲԿ Կենտկոմին, պահանջելով իրեն ազատել զբաղեցրած պաշտոնից, և ընդհանրապես Արտգործժողկոմի- համակարգից:[17]

Կարսի պայմանագրի շատ հոդվածներ բառացիորեն կրկնում էին Մոսկվայի պայմանագրի հոդվածները, և այս առումով պայմանագիրը չէր դիտվում որպես ինքնուրույն միջազգային իրավական ակտ: Պայմանագրի առաջին հոդվածով պաշտոնապես չեղյալ էր հայտարարվում Ալեքսանդրապոլի պայմանագիրը և այն ուղղված էր Սևրի պայմանագրի դեմ:

Երկրորդ հոդվածով Անդրկովկասի հանրապետությունները Թուրքիա անվան տակ ճանաչում էին այն տարածքները, որոնք մտցված էին 1920 թ հունվարի 28-ի թուրքական ազգային ուխտի մեջ:[18] Դա ուղղված էր, առաջին հերթին, Հայ դատի դեմ, քանի որ այն ընդունելով, նշանակում էր հրաժարում Թուրքիայի նկատմամբ տարաժքային որևէ պահանջագրից:

Մոսկվայի պայմանագրով գծված սահմանները բավական ընդհանուր բնույթ էին կրում, և այդ բացը պետք է լրացվեր Կարսի կոնֆերանսում: Բայց այդ հարցում որևէ համաձայնություն չկայացվեց: Հայկական կողմի առաջարկը. Սուրմալուի գավառը և Կողբի շրջանը թողնել հայկական կողմին մերժվեց:[19]

---

[16]- Խորհրդային Հայաստանը 1920-1921թթ, Երևան 2007:

[17] -նույն տեղում:

[18] -Հայոց պատմություն, Երևան 2012:

[19] -Հայկական կողմը դա բացատրում էր նրանով, որ Նախիջևանը Ադրբեջանին տալուց հետո, Կողբի աղահանքերը միակն էին, որտեղից Հայաստանը կարող էր աղ ստանալ:

Հայկական կողմը բարձրացրել էր նաև Անիի ավերակները Հայաստանին վերադարձնելու հարցը: Նույնիսկ Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Յակով Գանեցկին ընդգծեց, որ Անիի ավերակների հարցը կարևոր է ոչ միայն Հայաստանի, այլ նաև ամբողջ Անդրկովկասի Համար: Բայց թուրքական կողմը խիստ անզիջում և անհաշտվողական դիրք գրավեց: Թուրքական պատվիրակության ղեկավար Կարաբեքիրը ասաց որ նա չունի որևէ լիազորություն սահմանների փոփոխության հարցում և պետք է հրահանգ ստանա Անկարայից, և հրաժարվեց զիջել Անիի ավերակները: Ավելին, նա սպառնաց լքել խորհրդաժողովը, ինչին ի պատասխան Գանեցկին առաջարկեց շարունակել աշխատանքները այլ հարցերի շուրջ: Թուրքիան հրաժարվեց զիջել նաև Կողբի աղի հանքերը::

Լուծում չստացավ նաև թուրքերի կողմից Ալեքսանդրապոլի դեպոյի թալանված գույքը վերադարձնելու հարցը: Հայկական կողմն առաառաջարկում էր նաև որոշակի տոկոս տալու պայմանով իրենց իրավերապահել տնտեսական շահագործման ենթարկելՕլթիի քարածխի, Կաղզվանի մկնդեղի հանքերը և Սարիղամիշի անտառները, եթե իհարկե դրանք մնային Թուրքիայի կազմում [20]:

Պայմանագրի 5-րդ կետով Նախիջևանի մարզն ինքնավար տարածքքի կարգավիճակով դրվեց Ադրբեջանի խնամակալության ներքո: Թուր քիան Վրաստանին զիջեց Բաթումը և Սև ծովի աջարական հատվածը,

փոխարենը ստանալով Սուրմալուի գավառը, Արդահանի և Արդվինի շրջանները:

Կարսի պայմանագրի միակ դրական արդյունքն այն էր, որ թույլ տըր-

20

վեց հայ գերիներին վերադառնալ հայրենիք:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, թույլ չտալով հայերին մասնակցել կոնֆերանսին Ռուսաստանը և Թուրքիան բարեկամության և եղբայրության պայմանագիր կնքեցին, որը ստորագրվեց միջազգային իրավունքի կոպտագույն խաղտումներով, ինչն էլ առ ոչինչ էր դարձնում դրա իրավական լինելը:

Պայմանագրի ոչ իրավական համարելը կապված է այն հանգամանքի հետ, որ այն ստորագրած կողմերից ոչ մեկն էլ միջազգային ճանաչում չի ունեցել, հետևաբար չի հանդիսացել միջազգային իրավունքի սուբեկտ: Ոչ ՌՍՖՍՀ-ն ոչ էլ Թուրքական ազգային մեծ ժողովը, որն իր կարգավիճակով հասարակական կազմակերպություն էր, որևէ իրավական հիմք չուներ միջազգային ասպարեզում ներկայացնել թուրքական պետությունը:

Անօրինական ճանապարհով Հայաստանից խլելով մեծ ծավալի տարածքներ, թվում էր թե Թուրքիան դրանով կբավարարի: Բայց այդպես չեղավ, ընդհակառակը, պայմանագիրը չկարողացավ զսպել Թուրքիա ախորժակը, որ չհրաժարվեց հետագայում ևս քայլեր կատարել դեպի Արևելք ծավալվելու, Առաջավոր Ասիա ներթափանցելու, պանթյուրքական առավելապաշտական ծրագրերը իրականություն դարձնելու փորձերից:

Մեր օրերում ևս Հարավային Կովկասի շարունակաբար լարվող ռազմաքաղաքական իրավիճակն ու միջպետական հարաբերություններում առկա հակասությունները, տարածքային վեճերը, էթնիկ հակամարտությունները պարզ ցույց են տալիս, որ Մոսկվայի պայմանագիրը ի զորու չեղավ տարածաշրջանում ապահովել կայուն խաղաղություն և անվտանգ համակեցություն, ինչին ականատես եղանք ամիսներ

առաջ Թուրքիայի բացահայտ հովանավորությամբ Ադրբեջանի կողմից Արցախի նկատմամբ սանձազերծվեց լայնամասշտաբ ագրեսիա և ռազմակալվեց վերջինիս տարածքի մեծ մասը, մոտ 24 հզ. կմ քառակուսի:

Պայմանագրի արդիական լինելու դրսևորումներից մեկն էլ Ռուսաստանի և Թուրքիայի այսօրվա փոխհարաբերություններն են: Ինչպես այն ժամանակ, այսօր էլ այդ երկու պետություններն առաջնահերթ համարելով իրենց սեփական շահերը, դարձյալ փորձում են Հայաստանին վերաբերվող հարցերում փոխշահավետ համաձայնության գալ, դարձյալ հաշվի չառնելով հայ ժողովրդի շահերը: 1921թ Ռուսաստանը, մինչև կոնֆերանսի սկսվելը, շատ լավ գիտեր քեմանկական Թուրքիայի հակառուսական, հակախորհրդային դիրքորոշման մասին: Ռուսաստանին անհանգստացնում էր այն, որ Թուրքիան կարող է անցնել Անտանտի կողմը[21]: Վտանգից խուսափելու համար ռուսական կողմը գնում էր զիջումների հօգուտ Թուրքիայի, որ էլ շտապեց օգտվել առիթից: Թուրքական կողմի բարձրացրած ցանկացած պահանջ ռուսները ձգտում էին բավարարել, ինչի արդյունքում, ոտնատակ էին արվում Հայաստանի շահերը: Թուրքիան նույնիսկ հասավ դրան, որ ստիպեց Ռուսաստանին մեծացնել իրեն տրվող օգնության չափը, ինչին ռուսական կողմը, առանց երկար մտածելու տվեց իր համաձայնությունը:

Այսօր էլ, Ռուսաստանը, հաշվի առնելով միջազգային լարված իրավի-

[21] -1921թ փետրվարի 26-ից մարտի 14-ը Լոնդոնում կայացավ կոնֆերանս Անտանտի և Թուրքիայի մասնակցությամբ

ճայը, իր շահերից ելնելով, ձգտում է Թուրքիայի հետ պահպանել բարեկամական, դաշնակցային հարաբերություններ և աչք փակել տարածաշրջանում Թուրքիայի և իր կրտսեր եղբայր Ադրբեջանի իրականացրած հակաօրինական, հակահայկական գործողությունների վրա: Ինչի արդյունքում էլ այս երկու երկրների[22] շուրջը ստեղծվում է անպատժելիության մթնոլորտ, ինչն էլ ավելի է ազատում նրանց ձեռքերը տարածաշրջանում ավելի ագրեսիվ, հարձակողական քաղաքականություն վարելու:

Նույն, 1921թ հոկտեմբերի 13-ին ստորագրված Կարսի պայմանագիրը ևս չարդարացրեց հայերի հույսերը: Հայկական կողմի բոլոր առաջարկները հանդիպեցին թուրքական կողմի մերժմանը: Պայմանագիրը, որի որոշ հոդվածներ բառացիորեն կրկնում էին Մոսկվայի պայմանագրի կետերը ոչ միայն իզորու չեղավ պահպանել Հայաստանի տարածքային ամբողջականությունը, այլև մեկ անգամ ևս ազդարարեց թուրքական դիվանագիտության տարած փայլուն հաղթանակը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

[22] -Թուրքիա և Ադրբեջան

Խորհրդային Հայաստանը 1920-1991 թվականներին:

Հայ ժողովրդի պատմություն, հատ.7, Եր. 1967:

Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբե-

րությունները 1920-1922թթ, Երևան 1979:

Հայոց պատմության հիմնահարցեր, Երևան 2000:

Հայոց պատմություն, հատ. 4-րդ, Երևան 2010:

Արզումանյան Մ., Դարավոր գոյամարտ, Երևան 1989:

Հայոց պատմություն, Երևան 2012:

,

i